



Կարգապահական Գործ թիվ ԿԳ-15030

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 282-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/165-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԳԵՎՈՐԳ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ
ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Լիպարիտ Սիմոնյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Ալեքսանդր Սիրունյանի

Քարտուղարությամբ Նոնա Համբարձումյանի

Քննության առնելով փաստաբան Գևորգ Գրիգորյանի (արտոնագիր թիվ 82) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

ՀՀ Փաստաբաններ պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ-ին Պալատի Նախագահին ներկայացրել է տեղեկանք, այն մասին, որ փաստաբան Գևորգ Գրիգորյանը (արտոնագիր թիվ 82) 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով ունի 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտավորություն:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի առաջին տեղակալի 01.06.2015թ. թիվ 115-Ա/ԿԳ-15030 որոշմամբ փաստաբան Գևորգ Գրիգորյանի (արտոնագիր թիվ 82) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Կանոնագրքի 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

02.06.2015թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը նշանակված է եղել 2015 թվականի սեպտեմբերի 28-ին ժամը 19:16-ին, որը Գևորգ Գևորգյանի միջնորդությամբ հետաձգվել է և նշանակվել է 2015թ-ի նոյեմբերի 30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան

2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները

2015 թվականի սեպտեմբերի 28-ի նիստի ժամանակ խնդրել է նիստը հետաձգել, որպեսզի վճարի անդամավճարի գումարը, սակայն 2015թ-ինոյեմբերի 30-ին նիստի օրվա և ժամի մասին փաստային և էլեկտրոնային հասցեներով ծանուցված լինելով չի ներկայացել, բացատրություն չի տվել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Գևորգ Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 21.03.2001թ. (հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Գևորգ Գրիգորյանը ունի 40.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 01.06.2015թ. ՀՀ Փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Գևորգ Գրիգորյանը 2014թ. սեպտեմբերից մինչև 2015թ ապրիլ (ներառյալ) ամիսների համար անդամավճարի գծով 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ գումարի պարտքն չի վճարել: (հաստատվում է ՀՀ Փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահ Աիդա Աբրահամյանի կողմից 25.09.2015թ-ին և 30.11.2015թ տրամադրված տեղեկանքներով):

5. Պատասխանողի անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 28.09.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Գևորգ Գրիգորյանի (արտոնագիր 82 ստացված 21.03.2001թ.) նկատմամբ 2006-2015թթ ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթներ հարուցված չեն եղել:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Գևորգ Գրիգորյանը պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանված չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վրքագծի կանոնակարգի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ-ի թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետ նաև՝Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը հաշվետու ամսվան հաջորդող ամսվա ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ « ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Գևորգ Գրիգորյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է կարգապահական գործում առկա ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 25.09.2015թ և 30.11.2015թ. տրամադրված տեղեկանքներով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, « Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

- 1. Փաստաբան Գևորգ Գրիգորյանին (արտոնագիր 82) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:**
- 2. Փաստաբան Գևորգ Գրիգորյանի (արտոնագիր 82) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:**
- 3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Գևորգ Գրիգորյանին:**

Ծանոթություն: Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումը օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Լիպարիտ Սիմոնյան